ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 163 - Ա
19 օգոստոսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11 - Ի N 38 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի <<Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի N 52–Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 38–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 19-ի N 140-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրության 1-ին գլխի համաձայն **ստեղծել գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով** հետևյալ կազմով՝

Հակոբյան Անդրանիկ	- մարզպետի տեղակալ, **նախագահ**
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
Մնացականյան Վարդուհի	- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Սաֆարյան Համբարձում	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
Մանուկյան Պետրոս	- մարզպետի խորհրդական
Խաչատրյան Սուրիկ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ

Հովհաննիսյան Նորիկ - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, **քարտուղար**

Կարապետյան Տիգրան - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

Խլղաթյան Խոսրով - "Գեղամա աշխարհ" մարզային թերթի գլխավոր խմբագիր

Գևորգյան Անահիտ - "Մարտունու կանանց համայնքային խորհուրդ" Հ/Կ

Մոմչյան Կարինե - "Կանանց իրավունքների կենտրոն" Հ/Կ>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ